GLENDALE UNIFIED SCHOOL DISTRICT
223 North Jackson St., Glendale, California 91206-4380
Telephone: 818-241-3111 • Fax: 818-548-9041

Հուլիս 23, 2019

Գլենդելի հանրային դպրոցների հարգելի աշակերտներ, անձնակազմ, ընտանիքներ և համայնք,

Հույս ունեմ, որ դուք ամառային արձակուրդների պատեհ առիթից օգտվելով, ձեր ընտանիքի, ընկերների ու սիրելիների հետ հանգստանում ու լիցքավորվում եք: Մենք արդեն ավարտել ենք մեր ամառային դասընթացները, ուր մոտավորապես 4,900 աշակերտ հնարավորություն ունեցան զարգացնել իրենց գիտելիքները, վերականգնել անհրաժեշտ քրեդիթները և մասնակցել ամառային բարելավման աշխատանքների: Հաճույքն եմ ունեցել այցելելու մեր դպրոցներն ու դիտելու վերջին մի քանի շաբաթների ամառային դասընթացներն ընթացքի մեջ: Ես անհամբեր սպասում եմ ծանոթանալ մեր համայնքների հետ, երբ դպրոցը կվերաբացվի օգոստոսի 21–ին:

Մինչ ուսումնական տարվա մեկնարկը, ես ցանկանում եմ վերահաստատել Գլենդելի հանրային դպրոցների՝ մեր աշակերտներին ուսումնական անվտանգ միջավայր ապահովելու հանձնառությունը: Անկախ գաղթականական իրավիճակից, բոլոր աշակերտների իրավունքն է դպրոց հաճախել՝ առանց խտրականության, սպառնալիքի, կռվազանության, բրտության ու երկյուղալի միջավայրում:

Գլենդելի հանրային դպրոցների ուսումնական խորհուրդը որոշում է կայացրել ու հայտարարել, որ այլևս չի հարցնելու աշակերտների կամ ծնողների գաղթականական իրավիճակի մասին: Լրացուցիչ երաշխիքի համար, Գլենդելի հանրային դպրոցների ղեկավար և օժանդակ անձնակազմն աշակերտի անձնական գործը չի հանձնի որևէ իրավական մարմնի, եթե տվյալ մարմինն աշակերտի անձնական գործը ստանալու համար չներակայացնի դատարանի համապատասխան արտոնագիր: Մեր դպրոցները կշարունակեն լինել այն վայրերը, ուր աշակերտները կարող են սովորել ու բարգավաճել առանց վախի կամ հարցաքննվելու իրենց գաղթականական իրավիճաի մասին և առանց վախենալու, որ իրենք կարող են զեկուցվել, եթե իրենց գաղթականական իրավիճակը բացահայտվի:

Գլենդելի հանրային դպրոցներում, մենք ընդունում ենք բազմազանությունը, կենտրոնանում ենք հավասարության վրա և երաշխավորում ենք անվտանգությունը, որպեսզի արագացնենք ուսումնառության թափը և բազմացնենք յուրաքանչյուր աշակերտի առաջընթացման ուղիները: Մենք մեր հանձնառության մեջ վճռական ենք և մեր բոլոր աշակերտներին տրամադրելու ենք այնպիսի կրթություն, որ նրանց կպատրաստի հաջողելու քոլեջում, աշխատանքային ասպարեզում և կյանքում:

Այս վախազդու ժամանակաշրջան է շատ աշակերտների ու իրենց ընտանիքների համար: Համայնքի հետ համագործակցելով, մենք դպրոցների համար ապահովում ենք աղբյուրներ և ուսումնական նյութեր, որպեսզի հովանավորենք ու առաջնորդենք փաստաթղթեր չունեցող աշակերտներին ու ընտանիքներին: Տեղեկություններ ու աղբյուրներ առկա են www.gusd.net/knowyourrights կայքում:

Vivian Ekchian

Vivian Ekchian, Ed.D.
Superintendent of Schools

Translated by: GUSD Intercultural Office
Armenian